

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Վճարումների վերաբերյալ կարևոր տեղեկություններ հիվանդների համար

Համայնքային բժշկական կենտրոնները (ՀԲԿ) համայնքին փոխհատուցման երկարատև պատմություն ունեն: Մեր հանձնառությունն արտացոլված է մեր հիվանդանոցներում բուժօգնություն ստացող հիվանդների համար հասանելի ֆինանսական աջակցության մեր առատաձեռն քաղաքականության մեջ: Սույն ազդաթղթում ներառված է կարևոր տեղեկատվություն մեր հիվանդների համար, որը նրանց կօգնի հասկանալ մեր վճարային գործընթացը, վճարման տարբերակները և ֆինանսական աջակցության ծրագրերը: Դաշնային և նահանգային օրենքը պահանջում է, որ հիվանդանոցները տրամադրեն զեղչված կամ անվճար բուժօգնություն ապահովագրություն չունեցող կամ ցածր վճարով ապահովագրություն ունեցող հիվանդներին, ովքեր բժշկական մեծ ծախսեր ունեն: Ֆինանսական աջակցության համար դիմած և իրավասություն ստացած անհատներից անհետաձգելի կամ այլ անհրաժեշտ բուժօգնության համար ավելի գումար չպետք է գանձվի, քան նման բուժօգնությունը ծածկող ապահովագրություն ունեցող անհատներից սովորաբար գանձվող գումարները: Այս տեղեկատվությունը վերաբերում է միայն հիվանդանոցի կողմից ներկայացված հաշվին, և չի ներառում այն ծառայությունների վճարները, որոնք դուք ստանում եք բժիշկներից, անեսթեզիոլոգներից, բուժաշխատողներից, շտապօգնության ընկերություններից կամ բժշկական ոլորտի այլ մասնագետներից, ովքեր բժշկական ծառայություն են մատուցել Համայնքային բժշկական կենտրոններում (ՀԲԿ):

Ֆինանսական աջակցություն (Բարեգործական բուժօգնություն)՝ ցածր եկամուտ ունեցող առանց ապահովագրության և ցածր եկամուտ ունեցող ցածր վճարով ապահովագրությամբ հիվանդները, ովքեր բժշկական մեծ ծախսեր ունեն, կարող են իրավասու լինել անվճար բուժօգնություն ստանալու համար: Իրավասությունը սահմանվում է ըստ ընտանիքի եկամտի և անդամների թվի: Վճարողի բոլոր հնարավոր աղբյուրներից ստացվող եկամուտները պետք է սպառված լինեն նախքան հիվանդի՝ անվճար բուժօգնության իրավասություն ստանալը:

Չզեղչված բուժօգնություն՝ եթե հիվանդն իրավասու չէ անվճար բուժօգնության, նա դեռևս կարող է զեղչված բուժօգնության իրավասություն ստանալ: Իրավասությունը սահմանվում է ըստ ընտանիքի եկամտի և անդամների թվի: ՀԲԿ-ում անհետաձգելի բուժօգնության ծառայություններ մատուցող բժիշկները պետք է զեղչեր տրամադրեն ապահովագրություն չունեցող կամ ցածր վճարով ապահովագրություն ունեցող հիվանդներին, ովքեր ունեն բժշկական մեծ ծախսեր և գտնվում են դաշնային օրենքով սահմանված կենսական նվազագույնի 350 կամ ավելի ցածր տոկոսային մակարդակի վրա: Դուք կստանաք առանձին հաշիվ ՀԲԿ-ում ստացած անհետաձգելի բժշկական ծառայությունների համար: Բժշկի ներկայացրած հաշվի վերաբերյալ բոլոր հարցերով դիմեք բժշկի գրասենյակ:

Ֆինանսական աջակցության քաղաքականություն և խնդրագրեր՝ ՀԲԿ-ի ֆինանսական աջակցության քաղաքականության մասին տեղեկատվության և զեղչված կամ անվճար բուժօգնության խնդրագրերի պատճենները մատչելի են www.communitymedical.org հասցեով: ՀԲԿ-ի ֆինանսական աջակցության քաղաքականության մասին տեղեկատվության և

խնդրագրերի պատճենները մատչելի են նաև մեր հիմնական Ընդունարաններում հետևյալ հասցեներով՝ Համայնքային տարածքային բժշկական կենտրոն – 2823 Fresno Street, Fresno, CA 93721, Clovis համայնքային բժշկական կենտրոն – 2755 Herndon Avenue, Clovis, CA 93611 և Ֆրեզնոյի սրտաբանական վիրաբուժության հոսպիտալ – 15 E. Audubon Drive, Fresno, CA 93720: Ֆինանսական աջակցության քաղաքականության մասին տեղեկատվության և խնդրագրի անվճար պատճեն փոստով ստանալու համար խնդրում ենք հայտ ներկայացնել՝ զանգահարելով Ընդունարան՝ (559) 459-2998 հեռախոսահամարով: Ֆինանսական աջակցության քաղաքականության մասին տեղեկատվության և խնդրագրերի թարգմանությունները մատչելի են իսպաներեն, հնոնգերեն, փանջաբի, լաոսերեն, թագալերեն, իսրերեն/կամբոջերեն, հայերեն, արաբերեն, չինարեն, վիետնամերեն, գերմաներեն, կորեերեն, ճապոներեն, ռուսերեն, հինդի, պորտուգալերեն, պարսկերեն և մանդարին լեզուներով:

Խնդրագիր ներկայացնելու հետ կապված օգնություն՝ ՀԲԿ-ի (վերը նշված) Ընդունարանները կարող են օգնել ձեզ խնդրագիր ներկայացնելու գործընթացի հետ կապված: Ձեզանից պահանջվելու է լրացնել խնդրագիրը և տրամադրել ձեր ընտանիքի եկամուտը հաստատող փաստաթղթեր: Հիվանդները պետք է ֆինանսական աջակցության համար խնդրագրերը փոստով ուղարկեն՝ Community Medical Centers, Patient Financial Services Department, P.O. Box 1232, Fresno, CA 93715, Attn: Financial Assistance Application.: Խնդրագիրը և փաստաթղթերը ներկայացնելուց հետո ձեզ հետ կկապվեն ձեր իրավասության վերաբերյալ տեղեկացնելու համար: Եթե գտնում եք, որ իրավասու եք զեղչված կամ անվճար բուժօգնություն ստանալու համար, խնդրում ենք զանգահարել Ընդունարան (559) 459-2998 հեռախոսահամարով՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

Իրավասու ծառայություններ՝ իրավասու հիվանդները կարող են ստանալ Համայնքային բժշկական կենտրոններում (ՀԲԿ) մատուցվող անհետաձգելի կամ այլ անհրաժեշտ բժշկական ծառայությունների համար զեղչված կամ անվճար բուժօգնություն: Այն պարագաները և ծառայությունները, որոնք (1) բժշկական առումով անհրաժեշտ չեն վնասվածք կամ հիվանդություն բուժելու համար, (2) հիմնականում տրամադրվում են ընտրողական կոսմետիկ նպատակներով կամ (3) փորձարարական պարագաներ կամ ծառայություններ են, այդ թվում՝ հիվանդին տրամադրվում են որպես կլինիկական փորձարկման, հետազոտական ծրագրի կամ այլ շրջանակներում, իրավասու չեն զեղչված կամ բարեգործական բուժօգնության:

Պետական ծրագրի իրավասություն՝ դուք կարող եք իրավասու լինել պետության կողմից հովանավորվող առողջապահական նպաստի ծրագրի: ՀԲԿ-ն ունի մասնագիտացված աշխատակիցներ, ովքեր կարող են օգնել ձեզ դիմելու պետության կողմից հովանավորվող ծրագրին՝ ձեր հիվանդանոցային հաշիվը վճարելու համար: Դուք կարող եք օգնություն ստանալ կառավարության կողմից հովանավորվող առողջապահական նպաստների դիմելիս՝ զանգահարելով Ընդունարան (559) 459-2998 հեռախոսահամարով:

Առկա խնդրագրեր՝ եթե հիվանդը խնդրագիր է ներկայացնում կամ առկա խնդրագիր ունի առողջապահական ապահովագրության այլ ծրագրի համար նույն ժամանակահատվածում,

երբ դիմում է ՀԲԿ-ում բարեգործական կամ զեղչված բուժօգնության համար, ապա մի խնդրագիրը չի բացառում մյուսի իրավասությունը:

Վճարման տարբերակներ՝ ՀԲԿ-ն առաջարկում է վճարման մի շարք տարբերակներ, որոնք կօգնեն ձեզ վճարել ձեր հիվանդանոցային հաշիվը: Հիվանդի հաշվի մնացորդը ենթակա է վճարման ստանալուն պես, այդուհանդերձ, ֆինանսական աջակցության դիմած հիվանդների համար կարող են մատչելի լինել նաև երկարաձգված վճարման պլաններ: Եթե ՀԲԿ-ն և իրավասու հիվանդը չեն կարողանում համաձայնության գալ նպատակահարմար ամսական վճարի շուրջ, ապա հիվանդանոցը կօգտագործի այն բանաձևը, որը նկարագրված է Կալիֆոռնիայի առողջապահության և անվտանգության պահպանման օրենսգրքի 127400-րդ բաժնի (i) ենթակետում՝ վճարման ողջամիտ պլան մշակելու նպատակով:

Ֆինանսական հաշվարկների հասանելիության ծանուցում՝ դուք կարող եք խնդրել հիվանդանոցի ծառայությունների դիմաց վճարվելիք գումարի գրավոր հաշվարկները: Հաշվարկների համար հարցումը պետք է ներկայացվի աշխատանքային ժամերին: Հաշվարկաթերթիկում ներկայացված կլինի ձեզանից պահանջվող վճարվելիք գումարը հիվանդանոցի ծառայությունների, բուժական գործողությունների և այն սարքավորումների դիմաց, որոնց տրամադրումը հիվանդանոցում ողջամտորեն ակնկալելի է: Հաշվարկները հիմնված են հիվանդանոցում մնալու միջին տևողության և հիվանդի ախտորոշման նպատակով մատուցվելիք ծառայությունների վրա: Ծառայությունների համար ֆիքսված արժեքներ չկան: Հիվանդի ֆինանսական պարտավորվածության վճարվելիք գումարը կարող է ավել կամ պակաս լինել այդ հաշվարկներից՝ հիմնվելով այն ծառայությունների վրա, որոնք փաստացի ստանում է հիվանդը:

Հիվանդանոցը կարող է տրամադրել միայն հիվանդանոցի ծառայությունների համար պահանջվող գումարի հաշվարկը: Հնարավոր է՝ լինեն լրացուցիչ վճարներ այն ծառայությունների համար, որոնք հիվանդանոցում մնալու ընթացքում կտրամադրվեն բժիշկների կողմից, ովքեր չեն մտնում հիվանդանոցի բուժանձնակազմի մեջ, ինչպես օրինակ՝ անձնական բժիշկները, անեսթեզիոլոգները, պաթոլոգները, ռենտգենոլոգները, շտապ օգնության ընկերությունները կամ բժշկական ոլորտի այլ մասնագետներ: Նշված ծառայությունների համար հիվանդներին կներկայացվի առանձին հաշիվ:

Գրավոր հաշվարկների վերաբերյալ հարցերի դեպքում զանգահարեք Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին՝ (559) 459-3939 հեռախոսահամարով: